



Եվրոպական պայմանագրերի շարք – 162

**ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԵՎ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՎԵՑԵՐՈՐԴ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Ոչ պաշտոնական թարգմանություն

Ստրասբուրգ, 5 մարտի, 1996թ.

**Վեցերորդ Արձանագրությունը մեկ իրավական գործիքի մեջ միավորում է
Չորրորդ և Հինգերորդ Արձանագրությունների համապատասխան դրույթները:
Այն կիրառելի է «նոր» Դատարանի նկատմամբ, որն սկսել է գործել 1998թ.
նոյեմբերի 1-ից:**

Եվրոպայի Խորհրդի անդամ ներքոստորագրյալ պետությունները,

Հաշվի առնելով Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիան, ստորագրված Հռոմում 1950թ. նոյեմբերի 4-ին (այսուհետ՝ Կոնվենցիա),

Հաշվի առնելով Կոնվենցիայով ամրագրված վերահսկողության համակարգը վերակառուցող Կոնվենցիայի 11-րդ Արձանագրությունը, ստորագրված Ստրասբուրգում 1994թ. մայիսի 11-ին, (այսուհետ՝ Կոնվենցիայի 11-րդ Արձանագրություն), որով ստեղծվում է մշտապես գործող Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը (այսուհետ՝ Դատարան), որը փոխարինելու է Եվրոպական հանձնաժողովին և Մարդու իրավունքների դատարանին,

Հաշվի առնելով նաև Կոնվենցիայի 51-րդ հոդվածը, որը մատնանշում է, որ դատավորները, իրենց գործառույթների իրականացման ընթացքում, օգտվում են Եվրոպայի Խորհրդի Կանոնադրության 40-րդ հոդվածով և վերջինիս հիման վրա կնքված համաձայնագրերով նախատեսված արտոնություններից և անձեռնմխելիություններից,

Վերհիշելով Եվրոպայի Խորհրդի Արտոնությունների և անձեռնմխելիությունների մասին Ընդհանուր համաձայնագիրը, ստորագրված Փարիզում, 1949թ. սեպտեմբերի 2-ին (այսուհետ՝ Ընդհանուր համաձայնագիր), և վերջինիս Երկրորդ, Չորրորդ և Հինգերորդ արձանագրությունները;

Գտնելով, որ Ընդհանուր համաձայնագրի նոր արձանագրությամբ նպատակահարմար է լուծել Դատարանի դատավորների արտոնությունների և անձեռնմխելիությունների հարցը,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Ի հավելումն Ընդհանուր համաձայնագրի 18-րդ հոդվածում մատնանշված արտոնությունների և անձեռնմխելիությունների դատավորներին, նրանց ամուսիններին և անչափահաս երեխաներին պետք է տրամադրվեն այն արտոնություններն ու անձեռնմխելիությունները, որոնք տրված են դիվանագիտական ներկայացուցիչներին միջազգային իրավունքի համաձայն:

Հոդված 2

Սույն Արձանագրության նպատակների համար՝ «դատավորներ» հասկացության տակ նկատի են ունեցվում Կոնվենցիայի 22-րդ հոդվածի համաձայն ընտրված դատավորները, ինչպես նաև Կոնվենցիայի 27-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն համապատասխան մասնակից պետության կողմից նշանակված յուրաքանչյուր *ad*

hoc դատավոր:

Հոդված 3

Դատավորների համար իրենց պարտականությունների կատարման ընթացքում խոսքի լիակատար ազատություն և լիակատար անկախություն ապահովելու նպատակով՝ իրենց պարտականությունների կատարման ընթացքում բանավոր կամ գրավոր խոսքի և բոլոր գործողությունների առնչությամբ իրավական պատասխանատվությունից նրանց ունեցած անձեռնմխելիությունը պետք է շարունակվի ապահովվել չնայած այն հանգամանքին, որ նրանք այդպիսի պարտականություններ այլևս չեն իրականացնում:

Հոդված 4

Դատավորներին տրամադրվող արտոնություններն ու անձեռնմխելիությունները ապահովվում են ոչ թե իրենց անձնական օգուտի համար, այլ նրանց գործառույթների անկախ իրականացումը երաշխավորելու նպատակով: Դատավորներին անձեռնմխելիությունից կարող է զրկել միայն Դատարանի լիազուրկումը նիստը; վերջինս ոչ միայն իրավունք ունի, այլև պարտավոր է ցանկացած դատավորի զրկել անձեռնմխելիությունից յուրաքանչյուր դեպքում, երբ գտնում է, որ անձեռնմխելիությունը կխոչընդոտի արդարադատության իրականացմանը, և եթե անձեռնմխելիությունից զրկելը չի վնասի այն նպատակներին, որոնց համար այն տրամադրվում է:

Հոդված 5

1. Սույն Արձանագրության 1-ին, 3-րդ և 4-րդ հոդվածների դրույթները կիրառվում են Դատարանի Քարտուղարի նկատմամբ, ինչպես նաև Դատարանի Փոխարտուղարի նկատմամբ, որը Քարտուղարի պաշտոնակատար լինելու մասին պաշտոնապես ծանուցված է Կոնվենցիայի մասնակից պետություններին:
2. Սույն Արձանագրության 3-րդ և Ընդհանուր համաձայնագրի 18-րդ հոդվածների դրույթները կիրառվում են Դատարանի Փոխարտուղարի նկատմամբ:
3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերում հիշատակված Քարտուղարին և Փոխարտուղարին տրամադրվող արտոնություններն ու անձեռնմխելիությունները ապահովվում են ոչ թե իրենց անձնական օգուտի համար, այլ նրանց գործառույթների անկախ իրականացումը երաշխավորելու նպատակով: Քարտուղարին և Փոխարտուղարին անձեռնմխելիությունից կարող է զրկել միայն Դատարանի լիազուրկումը կազմը; վերջինս ոչ միայն իրավունք ունի, այլև պարտավոր է զրկել այդ անձեռնմխելիությունից յուրաքանչյուր դեպքում, երբ գտնում է, որ անձեռնմխելիությունը կխոչընդոտի արդարադատության

իրականացմանը, և եթե անձեռնմխելիությունից զրկելը չի վնասի այն նպատակներին, որոնց համար այն տրամադրվում է:

4. Ընդհանուր համաձայնագրի 19-րդ հոդվածի դրույթներին համապատասխան, և պատշաճ կերպով հաշվի առնելով 3-րդ կետում ամրագրված նկատառումները՝ Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարը իրավունք ունի, Դատարանի Նախագահի համաձայնությամբ, անձեռնմխելիությունից զրկել Քարտուղարության աշխատակազմի այլ անդամների:

Հոդված 6

1. Դատարանի, դատավորների և Քարտուղարության փաստաթղթերն ու վկայագրերը, այնքանով, որքանով որ դրանք վերաբերում են Դատարանի աշխատանքին, անձեռնմխելի են:

2. Դատարանի, դատավորների և Քարտուղարության պաշտոնական փոստի և պաշտոնական այլ հաղորդակցությունների վրա չի կարող կալանք դրվել և դրանք ենթակա չեն գրաքննության:

Հոդված 7

1. Սույն Արձանագրությունը բաց է Եվրոպայի Խորհրդի՝ Ընդհանուր համաձայնագիրն ստորագրած մասնակից պետությունների կողմից ստորագրման համար, որոնք կարող են պարտավորված լինելու մասին իրենց համաձայնությունն արտահայտել.

ա. ստորագրությամբ՝ առանց վավերացման, ընդունման կամ հաստատման վերաբերյալ վերապահումի, կամ

բ. ստորագրությամբ, որը ենթակա է վավերացման, ընդունման կամ վավերացման, որին հետևում է վավերացումը, ընդունումը կամ հաստատումը :

2. Վավերացման, ընդունման կամ հաստատման վավերագրերն ի պահ են հանձնվում Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարին:

Հոդված 8

1. Սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում 7-րդ հոդվածի դրույթներին համապատասխան սույն Արձանագրությամբ պարտավորված լինելու մասին երրորդ պետության կողմից իր համաձայնությունն արտահայտելու պահից հետո մեկամսյա ժամկետին հաջորդող ամսվա առաջին օրվանից կամ Կոնվենցիայի 11-րդ Արձանագրությունն ուժի մեջ մտնելուց հետո, որը որ տեղի կունենա վերջինը:

2. Ընդհանուր համաձայնագրի մասնակից ցանկացած պետության համար, որը հետագայում կստորագրի սույն Արձանագրությունը՝ առանց վավերացման, ընդունման կամ հաստատման վերաբերյալ վերապահումի, կամ որը կվավերացնի, կընդունի կամ կհաստատի այն, սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում նման ստորագրման կամ վավերացման, ընդունման կամ հաստատման վավերագիրն ի պահ հանձնելու պահից մեկ ամիս հետո:

Հոդված 9

1. Յուրաքանչյուր պետություն կարող է առանց վավերացման վերաբերյալ վերապահումի կատարված ստորագրման պահին կամ վավերացման պահին կամ ցանկացած հետագա պահի Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարին ուղղված ծանուցմամբ հայտարարել, որ սույն Արձանագրությունը տարածվում է բոլոր այն տարածքների կամ դրանցից յուրաքանչյուրի վրա, որոնց միջազգային հարաբերությունների համար ինքը պատասխանատու է, եթե դրանցում կիրառվում են Կոնվենցիան և դրան կից Արձանագրությունները:

2. Ծանուցման մեջ նշված տարածքի կամ տարածքների նկատմամբ սույն Արձանագրությունը սկսում է գործել այդ ծանուցումը Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարի կողմից ստանալուց հետո տասներեքերորդ օրը:

3. 1-ին կետի հիման վրա արված յուրաքանչյուր հայտարարություն կարող է Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարին ուղղված ծանուցմամբ հետ վերցվել կամ նորոգվել այդ հայտարարության մեջ նշված որևէ տարածքի առնչությամբ: Հետ վերցնելը կամ նորոգումը ուժի մեջ են մտնում այդպիսի ծանուցումը Գլխավոր քարտուղարի կողմից ստանալուց հետո մեկամսյա ժամկետին հաջորդող ամսվա առաջին օրը:

Հոդված 10

Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարը Խորհրդի անդամ Պետություններին ծանուցում է.

ա. յուրաքանչյուր ստորագրման մասին,

բ. վավերացման, ընդունման կամ հաստատման մասին վավերագիր ի պահ հանձնելու յուրաքանչյուր դեպքի մասին,

գ. սույն Արձանագրության՝ 8-րդ և 9-րդ հոդվածների համաձայն ուժի մեջ մտնելու յուրաքանչյուր ամսաթվի մասին.

դ. սույն Արձանագրությանն առնչվող յուրաքանչյուր այլ փաստաթղթի, ծանուցման

կամ հաղորդման մասին:

Ի վկայություն որի՝ ներքոստորագրյալները, պատշաճ կերպով լիազորված լինելով, ստորագրեցին սույն Արձանագրությունը:

Կատարված է Ստրասբուրգում, 1996 թվականի մարտի 5-ին, մեկ օրինակով, անգլերենով և ֆրանսերենով, երկու տեքստ էլ՝ հավասարազոր, որոնք ի պահ են հանձնվում Եվրոպայի Խորհրդի արխիվին: Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարը հաստատված պատճեններն ուղարկում է Եվրոպայի Խորհրդի բոլոր անդամ պետություններին: